

**ՀՀ Վայոց ձորի մարզպետը մասնակցել է „Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Սպիտակ և Վայք քաղաքներում,, ծրագրի պաշտոնական բացման արարողությանը**

13.03.2015

2015 թվականի մարտի 12-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը „Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա,, հիմնադրամի հրավերով մասնակցել է „Արմենիա Մարիոթ,, հյուրանոցի Տրդատ սրահում մեկնարկող „Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Սպիտակ և Վայք քաղաքներում,, ծրագրի պաշտոնական բացման արարողությանը: Միջոցառման բացման խոսքով հանդես են եկել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների փոխնախարար Հայկ Հարությունյանը, Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեսպան Տրայան Հրիսթեան, Սպիտակի քաղաքապետ Գագիկ Սահակյանը, Վայքի նախկին փոխքաղաքա ՀՀ Վայոց ձորի մարզպետը մասնակցել է „Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Սպիտակ և Վայք քաղաքներում,, ծրագրի պաշտոնական բացման արարողությանը

13.03.2015

պետ, ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական Վասիլ Ասլանյանը և „Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա,, հիմնադրամի խորհրդի նախագահ, Հաբիթաթ ֆոր Հյումենիթի ինթերնեյշնլի Եվրոպայի Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի տարածաշրջանային գրասենյակի փոխնախագահ Գրեգ Ֆոսթերը: Մեկնարկող ծրագրի արժողությունը 1 մլն 700 հազար եվրո է, որն ուղղվելու է նշված քաղաքների 47 բազմաբնակարան և հանրային նշանակության շենքերում էներգիայի արդյունավետ կիրառմանը և արևային էներգիայի օգտագործմանը: Ծրագրի հիմնական նպատակն է աջակցել Սպիտակի և Վայքի քաղաքապետարաններին՝ զարգացնելու և բազմաբնակարան և հանրային նշանակության շենքերում փորձարկելու էներգիայի խնայողության մոդելներ էներգաարդյունավետությանն ուղղված գործողությունների և արևային էներգիայի կիրառման ճանապարհով: Ծրագրի զեկավար Սերգեյ Արզումանյանը հայտնել է, որ ծրագրի շրջանակներում մինչև 2018 թվականը 47 բազմաբնակարան շենքերում իրականացվելու են էներգիայի խնայողությանը և արդյունավետությանն ուղղված միջոցառումներ: Շենքերից 27-ն Սպիտակում են, իսկ 18-ը՝ Վայքում: Վայքի մշակույթի տան շենքում իրականացվելու են տանիքի, դռների, պատուհանների փոխում և ջերմամեկուսացում, իսկ Սպիտակի մանկապարտեզի շենքում կտեղադրվեն արևային ջրատաքացուցիչներ և մարտկոցներ՝ էներգիա ստանալու և լողավազանն աշխատեցնելու նպատակով: Բազմաբնակարան շենքերի մուտքերի, աստիճանավանդակների և բակերի լուսավորության նպատակով կտեղադրվեն մոտ 145 արևային մարտկոցներ: